ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2011 թվականի N 71 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ <<ԻՋԵՎԱՆԻ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանարպետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2011 թվականի հուլիսի 8-ի թիվ 01/14.22/2162-11 գրության հիման վրա հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի <<Իջևանի ստոմատոլոգիական պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերության լուծարման միջանկյալ հաշվեկշիռը 2011 թվականաի հունիսի 15-ի դրությամբ:
2. Հաստատված միջանկյալ հաշվեկշիռը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի <<Իջևանի ստոմատոլոգիական պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերության լուծարման հանձնաժողովին:
3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Կ. Դովլաթբեկյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

14 հուլիսի 2011թ.
ք. Իջևան